ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն



# 2015

# ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

Երևան 2016

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ............................................................................................................ 3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ............................................................................................................ 4
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԻՃԱԿՆ՝ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ...................... 6
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ.................................................. 7
ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա ............................................................................ 7
Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ կոնվենցիաներ և ԳՐԵԿՈ ................................ 8
ՏՀԶԿ Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան..................................... 9
ՊԵՏԱԿԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ................................................... 10
Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ........................................................................ 10
Հակակոռուպցիոն ռազմավարություն և միջոցառումների ծրագիր .............................. 11
Կոռուպցիոն հանցագործությունների հետապնդում ու դատապարտում ..................... 14
ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ.................................................. 15
Պետական կամ համայնքային ռեսուրսների օգտագործում ........................................... 16
Էթիկայի կանոնների ոտնահարումներ ........................................................................... 17
ԱՄՓՈՓՈՒՄ..................................................................................................................... 17
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԱԿԴԿ շրջանակներում պարտավորությունների կատարման ընթացք ............................................................................................................................ 18
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՏՀԶԿ շրջանակներում հանձնառությունների կատարման ընթացք.....20
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների 2015թ. ծրագրի կատարողական ........................................................................................23
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Կոռուպցիոն հանցագործությունների հետապնդում և դատապարտում. վիճակագրություն..............................................................................................................28

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ԱԺ | Ազգային ժողով |
| ԱՆ | Արդարադատության նախարարություն |
| ԱՎԾ | ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն |
| ԳՐԵԿՈ | Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ (GRECO) |
| ԵԽ | Եվրոպայի խորհուրդ |
| ԹԻ | «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն ոչ կառավարական կազմակերպություն |
| ԹԻՀԿ | «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն |
| ԿԸՀ | Կոռուպցիայի ընկալման համաթիվ |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՄԱԿԴԿ | Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիա |
| ՎՊ | Վերահսկիչ պալատ |
| ՏՀԶԿ | Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ԹԻՀԿ) կողմից պատրաստված սույն զեկույցը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի վիճակի ամփոփ գնահատականը՝ ըստ վերջին միջազգային հետազոտությունների, շահերի բախման բացահայտված դեպքերը և կոռուպցիոն դրսևորումները, պետական հակակոռուպցիոն քաղաքականության և ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման ընթացքը և կոռուպցիոն հանցագործությունների հետապնդման և դատապարտման ընդհանուր պատկերը:

Զեկույցում տեղ են գտել 2015թ. ընթացքում հակակոռուպցիոն քաղաքականության զարգացումները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել լրատվամիջոցներին հայտնի դարձած մի շարք կոռուպցիոն դրսևորումներին:

Զեկույցը չի ներառել սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի հետ կապված ընտրական կոռուպցիայի և վարչական ռեսուրսի չարաշահման հետ կապված խնդիրները, որոնք ավելի վաղ հրապարակվել են «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդական առաքելության շրջանակում[1]:

*«Կոռուպցիա» տերմինը ծագել է լատիներեն «corruptus» և «corrumpere» բառերից, որ նշանակում են փչացում, այլասերում, վարակում, ապականում, աղճատում, աղավաղում, կաշառում և այլն[2]:*

*«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) միջազգային ոչ կառավարական կազմակերպության սահմանմամբ՝ «կոռուպցիա»-ն վստահված իշխանության չարաշահումն է՝ անձնական շահ ստանալու նպատակով[3]:*

*Հայաստանի Հանրապետությունում առաջին պաշտոնական սահմանումներից մեկի համաձայն այն «անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է[4]:*

*Կոռուպցիայի դրսևորման ձևերից են կաշառակերությունը, հովանավորչությունը, պաշտոնեական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնեական լիազորությունների չարաշահումը կամ անցումը, պաշտոնեական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումները[5]:*

---

[1] http://transparency.am/files/publications/1454928096-0-529110.pdf
Նաև՝ http://transparency.am/hy/news/view/1136
http://transparency.am/hy/news/view/1170
[2] Թարգմանություն լատիներենից անգլերենի՝ http://ablemedia.com/ctcweb/showcase/wordsonline.html, իսկ այնուհետև անգլերենից հայերենի՝ http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=65&pageNumber=200
[3] http://transparency.am/hy/resources/language-guide
[4] ՀՀ կառավարության 06.11.2003 N 1522-Ն որոշում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին:
[5] Նույն տեղում

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցի առանձին հարցերն ուսումնասիրվել են հետևյալ մեթոդաբանությամբ՝

*Կոռուպցիայի վիճակն ըստ միջազգային հետազոտությունների*

Այս բաժնում համառոտ ներկայացվել են կոռուպցիայի ընկալմանն ու տարածմանն առնչվող միջազգային առավել հայտնի ուսումնասիրությունների վերջին 1-2 տարվա արդյունքները, որոնք ներառել են Թրանսփարենսի Ինթերնեշնլ (այսուհետ՝ ԹԻ) միջազգային հակակոռուպցիոն ոչ կառավարական կազմակերպության 2015թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվը (այսուհետ՝ ԿԸՀ), Համաշխարհային բանկի 2014թ. Կառավարման համաշխարհային ցուցանիշների (World Governance Indicators) «կոռուպցիայի հսկողություն» (control of corruption) ցուցանիշի արժեքը և «Ֆրիդոմ Հաուզ» անկախ կազմակերպության «Անցումային պետություններ» (Nations in Transit) 2015թ. հետազոտության «կոռուպցիա» կատեգորիայի արժեքը:

*Միջազգային պարտավորությունների կատարում*

ԹԻՀԿ-ի կողմից գնահատվել է ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման, ինչպես նաև Հակակոռուպցիոն քաղաքականության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի ընթացքը՝ հիմք ընդունելով 2015թ. նախատեսված միջոցառումների իրականացման համար պատասխանատու մարմինների պաշտոնական կայքերում հասանելի տեղեկատվությունը, ինչպես նաև 2016թ. ապրիլ-մայիս ամիսներին այդ մարմիններին ուղղված հարցումների պաշտոնական պատասխանները: Հարկ է նշել, որ պետական մարմինների պատասխաններում ներկայացված տեղեկատվությունը լրացուցիչ չի ստուգվել այլ աղբյուրների միջոցով: Ապագայում ճշգրտվելու պարագայում, ԹԻՀԿ-ն իրավունք է վերապահում իրեն վերանայելու իր գնահատականները հակակոռուպցիոն քաղաքականության կատարողականի վերաբերյալ:

Գնահատման համար օգտագործվել են «առաջընթաց», «սահմանափակ առաջընթաց» և «առաջընթացի բացակայություն» գնահատականները: Հարկ է նշել, որ միջազգային որոշ պարտավորությունների իրականացման ընթացքի վերաբերյալ պետական մարմինների կողմից տեղեկատվություն չի տրամադրվել, ինչի արդյունքում հնարավոր չի եղել գնահատել դրանց կատարողականը:

*Պետական հակակոռուպցիոն քաղաքականություն*

Ինչպես և միջազգային պարտավորությունների դեպքում, հակակոռուպցիոն քաղաքականության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի ընթացքը գնահատվել է՝ հիմք ընդունելով 2015թ. նախատեսված միջոցառումների իրականացման համար պատասխանատու մարմինների պաշտոնական կայքերում առկա տեղեկատվությունը, ինչպես նաև 2016թ. ապրիլ-մայիս ամիսներին ԹԻՀԿ կողմից այդ մարմիններին ուղղված հարցումների պաշտոնական պատասխանները: Ընդ որում, պետական մարմինների պատասխաններում ներկայացված տեղեկատվությունը հետագայում չի ճշտվել, և հետագայում անճշտություններ հայտնաբերելու պարագայում ստացված գնահատականները կարող են փոխվել:

Կատարողականի գնահատման համար օգտագործվել են «իրականացվել է», «իրականացվել է մասամբ» և «չի իրականացվել» գնահատականները:

Կոռուպցիոն հանցագործությունների հետապնդման և դատապարտման պատկերը կազմելու համար հիմք են ընդունվել ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. նոյեմբերի 19-ի թիվ 82 հրամանով սահմանված և 2013թ. մարտի 19-ի թիվ 12 հրամանով լրամշակված կոռուպցիոն հանցատեսակները և ՀՀ գլխավոր դատախազության կայքում առկա վիճակագրական հաշվետվությունը այդ հանցատեսակների անչությամբ իրավապահ մարմինների գործունեության վերաբերյալ: Որոշ բացակայող տվյալներ վերցվել են նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) հրապարակումներից:

Բացի 2015թ. տվյալները ներկայացնելուց, համադրվել են նաև 2009-2015թթ. ժամանակահատվածի տվյալները՝ իրավապահ մարմինների կողմից կոռուպցիայի դեմ պայքարի դինամիկան բացահայտելու նպատակով:

*Շահերի բախում և կոռուպցիոն դրսևորումներ*

Շահերի բախման դեպքերը և կոռուպցիոն դրսևորումները վեր են հանվել 10-ից ավել առցանց լրատվամիջոցների լուսաբանումների ընթացիկ մոնիտորինգի արդյունքում:

## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԻՃԱԿՆ՝ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ըստ ԹԻ-ի կողմից ձևավորած ԿԸՀ[6] տվյալների՝ Հայաստանի ցուցանիշը 2015թ. հավասար էր 35-ի՝ 168 երկրների և տարածքների շարքում՝ կիսելով 95-98-րդ տեղերը Մալիի, Մեքսիկայի և Ֆիլիպինների հետ[7]: Այն նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նվազել է 2 միավորով, ինչը սակայն չի նշանակում էական հետընթաց:

Հարկ է նշել, որ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների շարքում Հայաստանը հանդիսանում է բացարձակ առաջատարը: Նրան հետևում են Բելառուսը՝ 32 միավորով (107-111 տեղեր), Ռուսաստանը՝ 29 միավորով (119-122 տեղեր), Ղրղզստանն և Ղազախստանը՝ 28 միավորով (123-129 տեղեր)[8]: Տարածաշրջանային համատեքստում Հայաստանը զգալիորեն զիջում է Թուրքիային՝ 42 միավորով (66-68 տեղեր) և Վրաստանին՝ 52 միավորով (48-49 տեղեր): Ադրբեջանը՝ 29 միավորով զբաղեցնում է 119-122 տեղերը, իսկ Իրանը՝ 27 միավորով՝ 130-135 տեղերը:

Ընդհանուր առմամբ, համարվում է, որ մինչև 50 միավոր ունեցող երկրներում համակարգային կոռուպցիայի հավանականությունը բավական մեծ է: Այս առումով,

---

[6] ԿԸՀ-ն հաշվարկվում է հանրային ոլորտում կոռուպցիայի մակարդակի փորձագիտական գնահատականների հիման վրա՝ հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրությունները:

[7] http://www.transparency.org/cpi2015: Գնահատումն իրականացվել է 1-100 միավոր սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է լիովին կոռումպացված, իսկ 100-ը՝ բացարձակ չկոռումպացված:

[8] http://www.transparency.org/cpi2015

Հայաստանը գտնվում է ռիսկային գոտում և, փաստորեն, տարիներ շարունակ մնում է նույն վիճակում:

Համաշխարհային բանկի Կառավարման համաշխարհային ցուցանիշների համաձայն «կոռուպցիայի հսկողություն» տոկոսային տիրույթի ցուցանիշը Հայաստանի համար 2014թ. հավասար էր 40-ի[9]: Նախորդ տարվա համեմատ այն ենթարկվել է փոքր հետընթացի և 2015թ. կազմել է 39 միավոր: Համեմատության համար պետք է ընդգծել, որ Բելառուսում այս ցուցանիշը 46 է, Ղազախստանում՝ 25, Ռուսաստանում՝ 19 և Ղրղզստանում՝ 12: Հարևան Վրաստանում «կոռուպցիայի հսկողություն» ցուցանիշը եղել է 73-ի, Թուրքիայում 55, Իրանում՝ 32:

Ըստ «Ֆրիդոմ Հաուզ» անկախ կազմակեպության «Անցումային պետություններ» վարկանիշային տարեկան հետազոտության՝ Հայաստանը 2015թ. «կոռուպցիա» կատեգորիայի համար ստացել է 5.25 միավոր[10]: Այս դեպքում ևս առկա չէ փոփոխություն. միավորը նույնն է, ինչ նախորդ տարում: Պետք է նկատել, որ այս հետազոտությունը տալիս է երկրների ընդհանուր ժողովրդավարության միավորը՝ հիմնվելով 7 կատեգորիաների միջին թվաբանականի վրա: Հայաստանի դեպքում 2015թ. ժողովրդավարության միավորը կազմել է 5.36, որը հիմք է երկիրը կիսակոնսոլիդացված ավտորիտար ռեժիմ համարելու համար: Համաձայն «Ֆրիդոմ Հաուզի», նման ռեժիմներում կոռուպցիան համատարած է և կոռուպցիայի դեմ պայքարելու ջանքերը սովորաբար պայմանավորված են քաղաքական դրդապատճառներով[11]:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

### ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա

2005թ. Հայաստանը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ՄԱԿԴԿ), որը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2006թ., իսկ 2007թ. ապրիլի 7-ին ՀՀ-ն միացել է կոնվենցիային: Կոռուպցիայի դեմ կոնվենցիան իրավապարտադիր համաձայնագիր է և այն ստորագրած պետությունների միջև սահմանում է կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման, հետաքննման և պատժելիության չափանիշները և պահանջները:

2012թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության դեմ գրասենյակի հարցաշարի հիման վրա հրապարակվել է ՀՀ կառավարության ինքնագնահատման զեկույցը[12]: Վերջինս արձանագրել է 21 մարտահրավեր, որոնք, ըստ էության, հանդիսանում են նաև բարեփոխումների համար հանձնառություններ:

[9] http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#home: Գնահատումն իրականացվել է 0-ից 100 տոկոսային տիրույթի սանդղակով, որտեղ ավելի բարձր արժեքը վկայում է ավելի լավ կառավարման մասին:
[10] https://freedomhouse.org/report/nations-transit/2015/armenia: Գնահատումն իրականացվել է 1-7 սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է ժողովրդավարական առաջընթացի բարձրագույն մակարդակ, իսկ 7-ը՝ ցածրագույնը:
[11] https://freedomhouse.org/report/nations-transit-methodology
[12] https://www.unodc.org/unodc/treaties/CAC/country-profile/profiles/ARM.html

ՄԱԿԴԿ-ով արձանագրված մարտահրավերների կատարողականի գնահատականը ցույց է տալիս, որ դրանցից միայն 2-ն են գնահատվել որպես առաջընթաց, իսկ 2-ը՝ սահմանափակ առաջընթաց: Այս մարտահրավերները/հանձնառությունները հետևյալն են՝

1. Բանկային գաղտնիքի մասին իրավական ակտերից բխող խոչընդոտների արդյունավետ հաղթահարում (մարտահրավեր 7):
2. Վիճակագրության օգտագործման վրա հիմնված գործերի կառավարման համակարգի ձևավորում՝ ուղղված փոխօգնության և էքստրադիցիայի հարցերի բարելավմանը (մարտահրավեր 11):
3. Քաղաքական հանցագործությունների բացառում էքստրադիցիայի վերաբերյալ պայմանագրերում (մարտահրավեր 13):
4. Քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի համապատասխանեցումը ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածին (մարտահրավեր 14):

Այս 4 մարտահրավերների կապակցությամբ դրական գնահատականները հիմնականում կապված են օրենսդրական միջամտությունների, մասնավորապես, նոր Սահմանադրության ընդունման և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու հետ:

Ինը մարտահրավերների կապակցությամբ առկա է տեղեկատվության պակաս, քանի որ համապատասխան պետական մարմինների կողմից ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան կոնկրետ տեղեկատվություն չի ներկայացվել: Հարկ է նկատել նաև, որ այս մարտահրավերների բացարձակ մեծամասնությունը վերաբերում է միջազգային համագործակցությանը և ձևակերպված է այնպես, որ դժվարացնում է դրա մոնիտորինգը: Դա նաև մանիպուլյացիաների տեղիք է տալիս, ինչպես նաև խուսանավելու հնարավորություն և՛ հանձնառության հասցեատերի, և՛ հանձնառության իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնողների համար:

ՄԱԿԴԿ մարտահրավերիների իրականացման կոնվենցիան ներկայացված է Հավելված 1-ում:

## Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ կոնվենցիաներ և ԳՐԵԿՈ

Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2003թ. մայիսի 15-ին և վավերացրել է 2004թ. հունիսի 8-ին: Նույն թվականի փետրվարի 17-ին պետությունը ստորագրել և դեկտեմբերի 8-ին վավերացրել է ԵԽ Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան:

2004թ. հունվարի 20-ին Հայաստանը անդամակցել է ԵԽ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում պետությունների հատուկ խմբին՝ ԳՐԵԿՈ-ին, որն իրականացնում է պարբերական գնահատումներ անդամ երկրների հակակոռուպցիոն միջոցառումների և վերոնշյալ կոնվենցիաների պահանջների կատարման նկատմամբ:

2012թ. հունվարի 1-ին սկսվել և 2015-ին շարունակվել է գնահատման 4-րդ փուլը, որն անդրադառնում է պատգամավորների, դատախազների և դատավորների շրջանում

կոռուպցիայի կանխարգելմանը[13]: 2015թ. ապրիլի 13-ից 17-ը ԳՐԵԿՕ-ի Գնահատող թիմը 4-րդ փուլի շրջանակներում իրականացրել է այցելություն Հայաստան և հանդիպել համապատասխան պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումների, ինչպես նաև 4-րդ փուլի Գնահատման հարցաշարի պատասխանների հիման վրա կազմվել է Հայաստանի 4-րդ փուլի գնահատման զեկույցը, որն ընդունվել է 2015թ. հոկտեմբերի 16-ին ԳՐԵԿՕ-ի 69-րդ պլենար նիստին[14]:

## ՏՀԶԿ Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան

Հայաստանը ներգրավված է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնված «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում, որը կոչված է բարելավելու նշված երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը միջազգային փորձագետների կողմից իրականացվող մոնիտորինգի արդյունքում մշակված հանձնարարականների հիման վրա:

2014թ. հոկտեմբերին ՏՀԶԿ երրորդ փուլի մոնիտորինգային զեկույցում ներկայացվել է հանձնարարականների հերթական խումբը. այն ներառում է 23 հանձնարարական: ՏՀԶԿ առաջընթացի զեկույցը ընդունվել է 2015թ. հոկտեմբերի 7-ից 9-ը կայացած ՏԶՀԿ Ստամբուլի գործողությունների ծրագրի 16-րդ նիստին:

ՏՀԶԿ-ի 23 հանձնարարականներից միայն 1-ն է գնահատվել որպես «առաջընթաց», իսկ 10 հանձնարարականներ՝ «սահմանափակ առաջընթաց»: Ինչ վերաբերում է մնացած 12 հանձնարարականներին, ապա դրանք գնահատվել են որպես ընդհանրապես առաջընթաց չունեցող:

Էական առաջընթաց է ապահովվել միայն 17-րդ հանձնարարականի առումով, որը վերաբերում է միանգամից մի քանի խնդրի՝ իրավական ակտերի ազդեցության գնահատման համակարգի բարելավմանը, էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրմանը, Բաց կառավարման համագործակցության արդյունավետության բարձրացմանը, տեսչական բարեփոխումների, ինչպես նաև հարկային և մաքսային բարեփոխումների եզրափակմանը: Մասնավորապես, դրական է համարվել այն, որ մշակվել են պետական վերահսկողության մասին նոր օրինագիծ և կառավարության նոր որոշումների նախագծեր, գնահատվել է 200 իրավական ակտ: Բացի այդ, 2015թ. հոկտեմբերի 3-ին ուժի մեջ է մտել կառավարության նոր որոշումը, որով ստեղծվել է Շուկայի վերահսկողության տեսչությունը:

Այն հանձնարարականները, որոնք գնահատվել են որպես բարելավված («սահմանափակ առաջընթաց» կամ «առաջընթաց»), հիմնականում պայմանավորված են եղել կա՛մ դասընթացների անցկացմամբ կամ նոր իրավական ակտերի ընդունմամբ:

«Սահմանափակ առաջընթաց» են համարվել հետևյալ գործողությունները.

[13] Տես հետևյալ հղմամբ՝ http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/index_en.asp
[14] Զեկույցը հրապարակվել է ԳՐԵԿՕ-ի կայքում 2016թ. փետրվարի 25-ին և համապատասխանաբար կներառվի ԹԻՀԿ 2016թ. հրապարակման մեջ:

- Միջազգային դոնոր կազմակերպությունների մասնակցությամբ մարտահրավերների թեմայով ֆորումի կազմակերպումը (հանձնարարական 1)
- ՀՀ ոստիկանության աշխատանքային խմբի ստեղծումը՝ ուսումնասիրելու ոստիկանության կողմից քաղաքացիներին ծառայությունների մատուցման համատեքստում ծագող կոռուպցիոն ռիսկերը (հանձնարարական 2)
- Արդարադատության ակադեմիայում դատախազների և քննիչների մասնագիտական վերապատրաստումների դասընթացների ներդրումն ու անցկացումը (հանձնարարական 5)
- Քաղաքացիական ծառայողների համար (թվով 54) էթիկայի կանոնների վերաբերյալ դասընթացների անցկացումը (հանձնարարական 12)
- Քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից միջազգային փորձը ուսումնասիրելու համար աշխատանքային խմբի ստեղծումը (հանձնարարական 13)
- Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի և ԱՆ կողմից միջազգային փորձի ուսումնասիրությունների իրականացումը (հանձնարարական 14)
- Քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից էթիկայի և կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ 4 դասընթացի անցկացումը (հանձնարարական 16)
- Ներքին աուդիտորների որակավորման գնահատման նոր համակարգի ներդրումը, Վերահսկիչ պալատի վերապատրաստված աուդիտորների կողմից ՀՀ բնապահպանության նախարարությունում պիլոտային աուդիտի անցկացումը, Գերմանական տնտեսական համագործակցության կազմակերպության աջակցությամբ ՎՊ և ներքին աուդիտորների համար աշխատանքային հանդիպման անցկացումը (հանձնարարական 18):
- տեղեկությունների գրանցման, դասակարգման, պահպանման և տրամադրման կարգի սահմանող ՀՀ կառավարության 1204-Ն որոշման ընդունումը (հանձնարարական 20)
- Նոր Սահմանադրությամբ դատական համակարգի համար ավելի ներկայացուցչական և ինքնակառավարվող բարձագույն մարմնի նախատեսումը (հանձնարարական 22):

ՏՀՁԿ շրջանակներում հանձնառությունների կատարման ընթացքը ներկայացված է Հավելված 2-ում:

## ՊԵՏԱԿԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ

2015թ. փետրվարի 19-ին ՀՀ կառավարությունն ընդունեց 165-Ն որոշումը Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու և փորձագիտական խումբ ձևավորելու մասին, և սահմանվեցին երկու մարմինների և ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիտորինգի բաժնի գործունեության կարգերը: Չնայած այն հանգամանքին, որ խորհրդում նախատեսվում էր ընդգրկել խորհրդարանական ընդդիմադիր խմբակցություններից և քաղաքացիական հասարակության (մրցույթով ընտրվելիք երկու կազմակերպության) ներկայացուցիչների՝ ըստ իրենց համաձայնության, խորհրդի կազմում համաձայնվեց ընդգրկվել միայն «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ որոշ

վերապահումներով, իսկ քաղաքացիական հասարակության ոչ մի կազմակերպություն չդիմեց անդամակցության համար: Խորհրդի կազմում չընդգրկվելու հիմնական պատճառներից մեկը, թերևս, կոռուպցիայի դեմ իրական պայքար մղելու՝ իշխանությունների քաղաքական կամքի հանդեպ անվստահությունն էր, մասնավորապես հաշվի առնելով այն, որ այս կառույցում նշանակվել էին հանրային ընկալմամբ կոռումպացված և վարկաբեկված բարձրաստիճան պետական պաշտոնյաներ:

2015թ. հուլիսի 28-ին կայացած իր անդրանիկ նիստում Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը հաստատել է հակակոռուպցիոն ռազմավարությունը: 2015թ. դեկտեմբերի 28-ին տեղի ունեցած երկրորդ և տարվա վերջին նիստի ընթացքում քննարկվել են կրթության, մասնավոր ոլորտի, մասնակցային կառավարման և մի շարք այլ հարցեր, ինչպես նաև հավանության է արժանացել ՀՀ Արդարադատության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) առաջարկը՝ նախատեսել պատասխանատվություն բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից գույքի և եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնելու ժամկետներն ու կարգը խախտելու համար, իսկ պատասխանատվություն կիրառելու լիազորությունը վերապահել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին[15]:

Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ազգային օրենսդրության միակ շոշափելի փոփոխությունը ՀՀ Կառավարության 2015թ. փետրվարի 19-ի թիվ 150-Ն որոշումն էր, որով փոփոխություն և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1835-Ն և 1819-Ն որոշումներում՝ ընդլայնելով բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի բովանդակությունը և հրապարակման ենթակա տվյալների շրջանակը: Մասնավորապես, այս փոփոխությունների ուժով բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրան փոխկապակցված անձի հայտարարագրերի տվյալները՝ կապված անշարժ գույքի, շարժական գույքի, արժեթղթերի, փոխառությունների հետ, ենթակա են հրապարակման անկախ ձեռքբերման կամ օտարման արժեքից՝ ի տարբերություն նախկինում ամրագրված որոշակի շեմերի:

## Հակակոռուպցիոն ռազմավարություն և միջոցառումների ծրագիր

«Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի» հայեցակարգի հիման վրա 2015թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց ՀՀ հակակոռուպցիոն երրորդ ռազմավարությունը [16] և 2015-2018թթ. միջոցառումների ծրագիրը[17]: Վերջինս մշակվել էր ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 10-ի նիստի թիվ 14 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգի» հիման վրա [18]:

[15] http://gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/28_12_2015.pdf
[16] ՀՀ կառավարության 24.10.2015 N 1141-Ն որոշում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին
[17] Առաջին՝ 2003-2007թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշմամբ, իսկ երկրորդը՝ 2009-2012թթ. համար՝ ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշմամբ:
[18] https://www.e-gov.am/protocols/item/359/

Միջոցառումների ծրագիրը բաղկացած է թեմատիկ 10 խմբից.

1. Պետական եկամուտների հավաքագրման ոլորտ
2. Ոստիկանության ոլորտ՝ քաղաքացիներին մատուցվող ծառայությունների մասով
3. Կրթության ոլորտ
4. Առողջապահության ոլորտ
5. Օրինավոր և բարեխիղճ հանրային դասի ձևավորում
6. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորում
7. Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորում
8. Մասնակցային կառավարման համակարգի ձևավորում
9. Կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության միջոցների սահմանում
10. Կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու և ամրապնդելու գործուն միջոցների ձեռնարկում:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրով վերոնշյալ 10 թեմաներով նախատեսված է 54 միջոցառում՝ կոնկրետ ժամանակային գրաֆիկով և ակնկալվող արդյունքներով:

2015թ. առաջադրված միջոցառումների մեծամասնության համար նախատեսված են շարունակական գործողություններ: Սույն զեկույցում դիտարկվել են միայն շարունակական բնույթ չկրող և մինչև տարեվերջ նախատեսված15 միջոցառում:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2015թ. նախատեսված 15 գործողություններից միայն 4-ն են ամբողջությամբ իրականացվել, 2-ն իրականացվել են մասամբ, իսկ 9-ը ընդհանրապես չեն իրականացվել:

*Ամբողջությամբ իրականացված գործողություններ*

2015թ. ընթացքում ամբողջությամբ իրականացվել են 26-րդ, 27-րդ, 38-րդ և 43-րդ միջոցառումներով նախատեսված գործողությունները: ՀՀ կառավարության կողմից, մասնավորապես, կատարվել են հետևյալ քայլերը.

- Գործադիր մարմիններում կատարվել են հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների նշանակումներ՝ պատասխանատու ստորաբաժանումների տեսքով և համապատասխան ակտերով ամրագրվել են նրանց գործառույթները (միջոցառում 26):
- Պատասխանատու պաշտոնատար անձանց պաշտոնի անձնագրերում կատարվել են համապատասխան փոփոխություններ և ամրագրվել են հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումից բխող գործառույթներ (միջոցառում 27):
- Մշակվել է պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների պարտադիր անկախ աուդիտ անցնելու ծրագիր, որն ունի հստակ չափանիշներ (միջոցառում 38):
- Մշակվել է ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 20-ի N47 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ նախարարությունների կոլեգիաների/խորհուրդների

օրինակելի աշխատակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ, որը տեղադրվել է ՀՀ ԱՆ պաշտոնական կայքում մեկնաբանությունների համար: Անցկացվել են հանրային քննարկումներ, ուսումնասիրվել է միջազգային փորձը և ընդունվել է համապատասխան իրավական ակտը (միջոցառում 43):

*Մասամբ իրականացված գործողություններ*

Մասամբ իրականացած է համարվել երկու գործողություն.

Առաջին գործողությունը վերաբերում է «կոռուպցիայի դեմ պայքարի, օրինավորության/բարեվարքության (integrity) ձևավորման և տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառման հմտություններ» թեմաներով վերապատրաստմանը: Ստացված պաշտոնական գրությունների համաձայն՝ 2015թ. ընթացքում իրականացվել է 10 վերապատրաստում: Ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության՝ անցկացվել են մի շարք վերապատրաստումներ, որոնց մասնակցել են 863 համայնքային ծառայող և մարզպետարանների 75 աշխատակիցներ[19] (միջոցառում 33):

Երկրորդ գործողությունը վերաբերում է հանրային լսումների, քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի և ձևաչափերի օրենսդրական կարգավորմանը (միջոցառում 39): ՀՀ Արդարադատության նախարարությունը մշակել է ՀՀ կառավարության 2010թ. մարտի 25-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 296-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ, որը ներկայացվել է կառավարություն: Այս գործողությունը գնահատվել է մասամբ իրականացված, քանի որ տարեվերջի դրությամբ նախատեսվող փոփոխությունը դեռևս ընդունված չէր:

*Չիրականացված գործողություններ*

Չիրականացված 9 գործողություններից 8-ը ենթադրում են տարբեր թեմաներով ուսումնասիրություններ: Համապատասխան պետական մարմինները, ի պատասխան ԹԻՀԿ հարցումների հայտնել են, որ անց են կացվել ուսումնասիրություններ, սակայն կառույցներից որևէ մեկը չի բավարարել հարցման մեջ նշված հստակ խնդրանքը, այն է՝ տրամադրել կատարված ուսումնասիրությունների պատճենները: Նման ուսումնասիրությունների արդյունքներն առկա չեն եղել նաև այդ մարմինների պաշտոնական կայքերում:

Այս առնչությամբ հարկ է նկատել, որ միջոցառումների ծրագրում առկա չէ կատարված ուսումնասիրությունները հրապարակելու հստակ պահանջ, ինչը, սակայն, կարևոր է թե՛ հաշվետվողականության բարձրացման և թե՛ հասարակության շրջանում կոռուպցիայի դեմ տարվող պայքարի հանդեպ վստահություն ձևավորելու համար:

---

[19] ՀՀ Տարածքաին կառավարման և զարգացման նախարարության պատասխան գրությունում վերապատրաստումների թիվը նշած չէ

Որոշ պետական մարմինների պատասխանները խնդրահարույց են, քանզի դրացում ներկայացված միջոցառումները նախատեսված էին իրականացնել այլ ծրագրերով (օրինակ՝ «Կարգավորիչ գիլյոտին» բարեփոխումների ծրագրով):

2015-2018թթ. ռազմավարության իրականացման միջոցառումների 2015թ. ծրագրի կատարողականի վերաբերյալ մանրամասները ներկայացված են Հավելված 3-ում:

### Կոռուպցիոն հանցագործությունների հետապնդում ու դատապարտում

Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը հաստատվել է ՀՀ գլխավոր դատախազի՝ 2008թ. նոյեմբերի 19-ի թիվ 82 հրամանով և լրամշակվել 2013թ. մարտի 19-ի թիվ 12 հրամանով [20]: Ըստ այս հրամանի՝ կոռուպցիոն հանցագործություններ են համարվում ՀՀ քրեական օրենսգրքի թվով 31 հոդվածներով նախատեսված արարքները: Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ստորև՝ հիմք ընդունելով ՀՀ դատախազության պաշտոնական կայքում առկա տեղեկատվությունը[21] և ՀՀ ԱՎԾ հրապարակումը [22]:

2015թ. ընթացքում հարուցված կոռուպցիոն գործերի քանակն աճել է՝ կազմելով 568 գործ: Դրա տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ հասել է վերջին 7 տարիների առավելագույնին՝ 3.33 %: 2009-2015թթ. այս թիվը տատանվել է մոտավորապես 2%-3.3% սահմաններում, թեև 2008թ. եղել է 4.21%:

Հարկ է նշել, որ բավական բարձր են եղել կոռուպցիոն քրեական գործերի հարուցման մերժման, կարճման, դատարան ուղարկված գործերով մարդկանց քանակի ցուցանիշները: Այսպես, արձանագրվել է.

- քրեական գործի հարուցումը մերժելու 714 դեպք, որը երկրորդ ամենաբարձր ցուցանիշն է 2013թ.-ից հետո
- քրեական գործի կարճման 462 դեպք, որն ամենաբարձրն է վերջին 7 տարիներին՝ ավելի քան տասն անգամ գերազանցելով 2008թ. ցուցանիշը
- մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված 119 գործ, որը երկրորդ ամենացածր ցուցանիշն է՝ ընդամենը մեկ միավորով տարբերվելով նախորդ տարվա ամենացածր ցուցանիշից
- դատարան ուղարկված գործերով մարդկանց թիվը կազմել է 213, որն էապես չի փոխվել վերջին հինգ տարվա միջին ցուցանիշից.
- քննված և դատապարտված գործերի քանակը կազմել է 86 գործ, որն ամենացածր ցուցանիշն է և 2008թ. համեմատ նվազել է մոտ երկու անգամ
- ամբաստանյալների և դատապարտյալների քանակը կազմել է 292, որն ամենացածրն է վերջին 7 տարիների ընթացքում

[20] http://prosecutor.am/am/corruption/corruption/
[21] http://prosecutor.am/am/corruption/corruption-documents/
[22] http://www.armstat.am/file/article/sv_12_14a_550.pdf և http://www.armstat.am/file/article/sv_12_15a_550.pdf

- դատապարտված պաշտոնատար անձանց թիվը 89 է, որը թեև գերազանցում է վերջին հինգ տարվա միջին ցուցանիշը, շուրջ մեկ ու կես անգամ ավելի պակաս է 2008թ. ցուցանիշից:

2015թ. համար դրական զարգացում կարելի է համարել այն, որ, ի տարբերություն նախորդ տարիների, ավելի քիչ թվով քրեական գործեր են հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության համար (հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը): 2015թ. այս հանցատեսակի հիմքով հարուցված գործերը երրորդ տեղում են (100 գործ):

Փոխարենը առավել շատ թվով գործեր հարուցվել են ՀՀ Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով՝ պաշտոնեական լիազորություններն անցնելը (115 գործ), և 308 հոդվածով՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը (113 գործ):

Կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրությունը ներկայացված է Հավելված 4-ում:

## ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Շահերի բախման, կոռուպցիոն դրսևորումների և կասկածելի հարստացման դեպքերի բացահայտումները լրատվամիջոցների կողմից շարունակվել են, սակայն, ինչպես և նախորդ տարիներին, դրանք իրավասու մարմինների կողմից չեն ստացել պատշաճ արձագանք, և այդ դեպքերը քննության առարկա չեն դարձել, ինչը հասարակության մեջ հավատ կձևավորեր կոռուպցիայի դեմ պայքարի իրական լինելու վերաբերյալ: Մինչ օրս որևէ պաշտոնական բացահայտում չի եղել բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ շահերի բախման իրավիճակում գտնվելու վերաբերյալ:

Լրատվամիջոցներին հայտնի դարձած հիմնական սկանդալային դեպքերը ներառել են բարձրաստիճան պաշտոնատար անձանց ունեցվածքի օրինականության հետ կապված կասկածները, նրանց ոչ էթիկական վարքագծի դրսևորումները, գնումների ընթացքում հնարավոր չարաշահումներն, ինչպես նաև պետական կամ համայնքային բյուջեի բազմաթիվ չարաշահումները: Այս առնչությամբ առավել աղմկահարույց և լայնորեն լուսաբանված տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

### Գույքի և եկամուտների հայտարարագրեր

ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր ծառայության պետ (այժմ՝ նախկին) Միհրան Պողոսյանի 2014թ. հայտարարագրից պարզ դարձավ, որ վերջինիս գույքը և եկամուտները եղել են չնչին (ընդամենը 16.150.000 դրամի եկամուտ, որից 4.150.000 դրամը՝ աշխատավարձ, 2.000.000 դրամը՝ «RANGE ROVER SPORT Supercharged 4.2» մակնիշի ավտոմեքենայի օտարումից ստացած եկամուտ, իսկ մնացածը՝ վարձակալության դիմաց

ստացված վճարներ)[23]: Ավելի ուշ նրա անունը հիշատակվեց Պանամայի օֆշորային գոտու սկանդալային գործում:

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի դեպքում շարունակում է անհայտ մնալ նրա կողմից հայտարարագրված ունեցվածքի ծագումը[24]: Հայտարարագրելով 250 միլիոն դրամի, ինչպես նաև 50-հազարական եվրոյի և դոլարի եկամուտներ, անպատասխան է մնացել այն հարցը, թե ինչպես է նա այդքան գումարներ վաստակել՝ զբաղեցնելով միայն պետական կամ համայնքային պաշտոններ:

ՀՀ նախագահի վերահսկողության ծառայության ղեկավար (այժմ՝ նախկին) Հովհաննես Հովսեփյանը, ըստ ներկայացրած հայտարարագրերի, միայն 2014թ. ընթացքում ստացել է 600.000 ԱՄՆ դոլարի նվիրատվություն[25]:

Առանձնակի ուշագրավ են իրավապահ մարմինների ղեկավարների կանանց հայտարարագրած եկամուտների նվիրատվությունների բաժինը. ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետ (այժմ՝ նախկին) Գորիկ Հակոբյանի կինը տարվա ընթացքում ստացել է շուրջ 40.000 ԱՄՆ դոլարի, իսկ ՀՀ Վերահսկիչ պալատի խորհրդի անդամ Գագիկ Մկրտումյանի կինը՝ շուրջ 100.000 ԱՄՆ դոլարի նվիրատվություն:

Հարկ է նշել, որ վերոնշյալ հսկայածավալ նվերների, նվիրատուների հետ հարաբերությունների համադրելիության կամ դրանց աղբյուրների օրինականության վերաբերյալ հարցերը երբևէ վարույթի քննության առարկա չեն դարձել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովում[26]:

### Պետական կամ համայնքային ռեսուրսների օգտագործում

2015թ. ՀՀ կառավարությունը շուրջ 755 միլիոն ՀՀ դրամ արժողությամբ 28 բնակարան է նվիրել տարբեր գերատեսչությունների աշխատողների, և դա այն դեպքում, երբ դրանցից ոմանք արդեն ունեցել են բնակարաններ[27]:

Կասկած են հարուցում որոշ հասարակական կազմակերպություններին դրամաշնորհներ տրամադրելու գործընթացը: Այսպես, Հայաստանի երիտասարդական հիմնադրամը մրցույթ է կազմակերպել և ՀՀ նախագահի աշխատակազմի ռեսուրսներից մոտ 200 միլիոն ՀՀ դրամը բաշխել է 30 կազմակերպությունների միջև, որոնցից միայն 3-ի մասին կան տվյալներ «Սփյուռ» տեղեկատվական համակարգում, կայք կամ բլոգ ունեն 5-ը և 5-ը ներկայացված են «Facebook» սոցիալական ցանցում՝ առանց կոնտակտային տվյալների[28]:

---

23 http://www.ethics.am/hy/declarations-registry/id=9374/ նաև http://hetq.am/arm/news/58845/ur-en-anhetacel-mihran-poxosyani-gumarnery.html/
24 http://www.azatutyun.am/a/26930633.html
25 http://ethics.am/hy/declarations-registry/id=7599/
26 http://www.azatutyun.am/a/27018554.html
27 http://www.azatutyun.am/a/26854669.html
28 http://www.azatutyun.am/a/26957766.html

Երևանի ավագանու որոշմամբ՝ Էստոնական 12/3 հասցեում գտնվող հողամասը և շինությունը 10 տարով անհատույց տրամադրել է Երևանի փոխքաղաքապետ Կամո Արեյանի կողմից գլխավորվող «Սասուն-Տարոն հայրենակցական միությանը»[29]:

### Էթիկայի կանոնների ոտնահարումներ

2015թ. էթիկայի կանոնների խախտման առավել աղմկահարույց գործերը կապված են եղել ՀՀ ԱԺ պատգամավոր Առաքել Մովսիսյանի և Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի անվան հետ: Առաջինը, խոսելով ՀՀ պաշտպանության նախարարի (այժմ՝ նախկին) կնոջ վերաբերյալ լրատվամիջոցներում հրապարակվող նյութերի մասին, խոստացել էր հրապարակումների ենթադրյալ պատվիրատուներին գլխատել և, բռնելու դեպքում, բռնաբարել[30]: Այս հայտարարության առնչությամբ ՀՀ ԱԺ էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովը գտել է, որ Առաքել Մովսիսյանը խախտել է պատգամավորի էթիկայի կանոնները[31]:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ 2015թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունը լուրջ առաջընթաց չի արձանագրել կոռուպցիայի դեմ պայքարում: Միջազգային պարտավորությունների, ազգային հակակոռուպցիոն քաղաքականության, կոռուպցիայի քրեական հետապնդման և բարձրաստիճան պաշտոնյաների՝ կոռուպցիոն հիմքով քրեական պատասխանատվության ուղղությամբ իրավիճակը շարունակում է մնալ գրեթե նույնը:

Իրավիճակի կտրուկ բարելավման և ՀՀ իշխանության ներկայացուցիչների հակակոռուպցիոն հայտարարությունները իրական պայքարի վերածելու համար անհրաժեշտ են կտրուկ քայլեր: Հարկավոր է գործով, և ոչ միայն փաստաթղթերով կամ հայտարարություններով ցույց տալ կոռուպցիայի դեմ պայքար մղելու մտադրությունը:

Հանրային վստահությունը շահելու համար նաև կարևորագույն գործոն է մասնակցային գործընթացը և այդ համատեքստում՝ նաև քաղաքացիական հասարակության շահագրգիռ խմբերի հետ խորհրդակցությունների անցկացումը:

[29] http://armtimes.com/hy/article/62630
[30] http://www.azatutyun.am/a/27047881.html
[31] http://www.parliament.am/committee_docs_5/Etika/01.12.15N2-15.pdf

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԱԿԴԿ շրջանակներում պարտավորությունների կատարման ընթացք

| Մարտահրավեր բովանդակությունը | Առաջընթաց | Գնահատական |
|---|---|---|
| **1. ՀՀ քրեական օրենսգրքի 312 և 312.1 հոդվածների համապատասխանեցում կոնվենցիայի հոդված 15 (ա)-ի հետ** | | Չի իրականացվել |
| **2. ՀՀ քրեական օրենսգրքի 311 և 311.1 հոդվածների համապատասխանեցում կոնվենցիայի հոդված 15 (բ)-ի հետ** | | Չի իրականացվել |
| **3. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի  համապատասխանեցում կոնվենցիայի հոդված 16 (2,բ)-ի հետ** | | Չի իրականացվել |
| **4. Փողերի լվացման մասին օրենքների փոխանցումը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին՝ ի կատարումն կոնվենցիայի հոդված 23-ի** | | Տեղեկություն առկա չէ |
| **5. Հայաստանը խրախուսվում է քրեականացնել ոչ մեծ ծանրության պարտակման դեպքերը** | | Չի իրականացվել |
| **6. Ներպետական օրենսդրության համապատասխանեցում կոնվենցիայի հոդված 31-ի 1-ին մասի «բ» կետի հետ / գույքի, սարքավորման և այլ միջոցների բռնագրավում, որոնք օգտագործվել են կամ նախատեսվել են իրավախախտումներ կատարելիս օգտագործելու համար/** | | Չի իրականացվել |
| **7. Բանկային գաղտնիքի մասին իրավական ակտերից բխող խոչընդոտներն արդյունավետորեն հաղթահարվում են** | Լրացումներ և Փոփոխություններ «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում (հոդված 13.1), որի համաձայն բանկային գաղտնիք կարող է տրամադրվել միայն իրավապահ մարմնի հիմնավորված պահանջի դեպքում: | Մասնակիորեն է իրականացվել |
| **8. Վկաների պաշտպանության ծրագրի պրակտիկ իրականացում և դրա իրականացման համար պատշաճ ֆինանսավորում** | | Չի իրականացվել |
| **9. Իրավապահ մարմինների և քաղաքացիների միջև համագործակցության ուժեղացում** | | Չի իրականացվել |
| **10. Էքստրադիցիայի և փոխադարձ իրավական աջակցության ուղեցույցի ընդունում** | | Չի իրականացվել |
| **11. Ունենալ գործերի կառավարման համակարգ՝ հիմնված վիճակագրության օգտագործման վրա՝ ուղղված փոխօգնության և էքստրադիցիայի հարցերի բարելավմանը** | ՀՀ ԱՆ-ն վարում է էքստրադիացների | Մասնակիորեն է իրականացվել |

| | | |
|---|---|---|
| | վերաբերյալ վիճակագրություն | |
| **12. Էքստրադիցիայի գործընթացների արագացում և ապացուցողական պահանջների պարզեցում՝ կապված ցանկացած հանցագործության հետ, որի առնչությամբ կիրառելի է կոնվենցիան** | | Չի իրականացվել |
| **13. Քաղաքական հանցագործությունները պետք է տեղ չունենան էքստրադիցիայի մասին պայմանագրերում** | Քաղաքական հանցագործությունները տեղ չեն գտել պայմանագրերում: | Իրականացվել է |
| **14. Քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի համապատասխանեցումը ՀՀ Սահմանադրության 30.1 հոդվածին** | Նոր ընդունված Սահմանադրության հետ համապատասխանեցում | Իրականացվել է. |
| **15. Շարունակել ուսումնասիրել երկկողմանի էքտրադիցիաների մասին պայմանագրերի կնքման հնարավորությունները** | | Տեղեկություն առկա չէ |
| **16. Ուսումնասիրել հնարավորությունները՝ կնքելու երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կամ կառույցակարգեր, որոնք հատուկ կերպով կծառայեն կոնվենցիայի հոդված 46-ի նպատակներին** | | Տեղեկություն առկա չէ |
| **17. Ուսումնասիրել կոնվենցիային անդամ այլ պետությունների համապատասխան մարմինների հետ հաղորդակցման ավելի շատ միջոցներ սահմանելու հնարավորորությունները** | | Տեղեկություն առկա չէ |
| **18. Ուսումնասիրել լրացուցիչ քայլեր ձեռնարկելու հնարավորությունը՝ ուժեղացնելու համար իրավապահ մարմինների համագործակցությունը խնդրանքներ կատարելու հարցում կոռուպցիայի դեմ կոնվենցիայով սահմանված հանցագործությունների առնչությամբ** | | Տեղեկություն առկա չէ |
| **19. Ուսումնասիրել հնարավորությունը՝ ուժեղացնելու կոնվենցիայի հոդված 46-ի 1-ին մասի «գ» կետի իրականացումը** | | Տեղեկություն առկա չէ |
| **20. Ուսումնասիրել հնարավորությունը՝ ուժեղացնելու կոնվենցիայի հոդված 46-ի 1-ին մասի «ե» կետի իրականացումը** | | Տեղեկություն առկա չէ |
| **21. Ուսումնասիրել հնարավորությունը՝ շարունակելու երկկողմ կամ բազմակող համաձայնագրերի կամ կառուցակարգերի կնքումը՝ օգտագործելու հատուկ քննչական ծառայության մեթոդները միջազգային համագործակցության մակարդակում** | | Տեղեկություն առկա չէ |

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՏՀՉԿ շրջանակներում հանձնառությունների կատարման ընթացք

| Հանձնառության բովանդակությունը հակիրճ | Առաջընթաց | Գնահատական |
|---|---|---|
| **1. Հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ խորհրդակցությունների անցկացում**<br>**Ռազմավարության համակարգման և մոնիտորինգի ուժեղ մեխանիզմի առկայություն**<br>**Ռազմավարության իրականացման համար բյուջեի մշակում** | Միջազգային դոնոր կազմակերպությունների մասնակցությամբ մարտահրավերների թեմայով փորումի (դեկտեմբերի 11) և:<br>(նոյեմբերի 25) և աշխատաժողովի (բիզնեսում կոռուպցիոն ռիսկերի և բարեխղճության հարցեր) կազմակերպումը | Սահմանափակ առաջընթաց |
| **2. Բարձր ռիսկային ոլորտներում ուսումնասիրությունների անցկացում**<br>**ՀԿ-ներին աջակցություն իրենց  ուսումնասիրությունների ընթացքում**<br>**ՀԿ-ների կողմից անցկացված ուսումնասիրությունները ընդունել որպես հիմք նոր ռազմավարության մշակման համար և դրա մոնիտորինգի համար** | ՀՀ ոստիկանությունը ստեղծել է աշխատանքային խումբ՝ ուսումնասիրելու կոռուպցիոն ռիսկերը քաղաքացիների՝ ոստիկանության կողմից ծառայությունների մատուցման համատեքստում: | Սահմանափակ առաջընթաց |
| **3. Տրամադրել ՀԿ-ներին ավելի լայն մասնակցություն կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդում**<br>**Ռազմավարության իրականացման սկզբում հանրային իրազեկման արշավի իրականացում**<br>**Ռազմավարության իրականացման ընթացքում պաբերաբար հանրային իրազեկման արշավների անցկացում՝ շեշտը դնելով կոռուպցիայի հետ առերեսվելու ժամանակ քաղաքացիների իրավունքների և պարտականությունների վրա** | | Առաջընթացի բացակայություն |
| **4. Հակակոռուպցիոն ռազմավարության համակարգման և մոնիտորինգի աշխատանքի իրականացումը կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կողմից**<br>**Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի մշտական քարտուղարությանը համակարգման և մոնիտորինգի գործառույթի տրամադրում**<br>**Պետական մարմինների կարողությունների զարգացում հակակառուպցիոն միջոցառումների մշակման և իրականացման համար**<br>**Դոնոր կազմակերպությունների համակարգման մեխանիզմի սահմանում** | | Առաջընթացի բացակայություն |
| **5. Իրավաբանական անձանց  քրեական պատասխանատվության ներդնում**<br>**Ազդեցության չարաշահման հանցակազմի համապատասխանեցում միջազգային ստանդարտների հետ**<br>**Դատախազների և քննիչների մասնագիտական վերապատրաստումներ** | Արդարադատության ակադեմիայում ներդրվել է դասընթաց և անցկացվել է ուսուցում: | Սահմանափակ առաջընթաց |
| **6. Անձեռնմխելիության դրույթները իրականության մեջ չեն հանդիսանում խոչընդոտ կոռուպցիոն գործերի արդյունավետ քննության համար** | | Առաջընթացի բացակայություն |
| **7. Բանկային գաղտնիքի  և դրա հետ կապված օրենսդրության ինվենտարիզացիա և ուսումնասիրություն** | | Առաջընթացի բացակայություն |

| | | |
|---|---|---|
| **Դատախազների և քննիչների վերապատրաստումներ բարդ ֆինանսական գործերի քննության արդյունավետության համար** | | |
| **8. Իրավապահ մարմինների և դատախազության հակակոռուպցիոն մասնագիտացման խրախուսում**<br>**Իրավապահ մարմինների և վերահսկիչ մարմինների միջև համագործակցության խթանում կոռուպցիոն գործերի կապակցությամբ**<br>**Իրավապահ մարմինների խրախուսում կոռուպցիայի դեմ պայքարը ավելի նախաձեռնողական ոճով տանելու և թիրախավորելով բարձրաստիճան պաշտոնյաներին, ինչպես նաև  հանրային կառավարման և տնտեսության ավելի ռիսկային ոլորտների թիրախավորմամբ** | | Առաջընթացի բացակայություն |
| **9. Կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության բարելավում** | | Առաջընթացի բացակայություն |
| **10. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի իրավազորությունների ավելացում**<br>**Նշված հանձնաժողովին սեփական բյուջեի տրամադրում**<br>**Հանրային ծառայության ընդհանուր չափանիշները վերահսկող մարմնի նախաձեռնում** | | Առաջընթացի բացակայություն |
| **11. Էթիկայի հանձնաժողովների արդյունավետության բարձրացում հատուկ մարմնի ստեղծմամբ, որը կունենա համակարգման լիազորություն** | | Առաջընթացի բացակայություն |
| **12. Հանրային ծառայողների առանձին խմբերի էթիկայի կանոնագրքերի ընդունում, դրանց համապատասխանեցում Հանրային ծառայության մասին օրենքին և հանրային ծառայողների համար դասընթացների անցկացում** | Անցկացվել են դասընթացներ քաղաքացիական ծառայողների համար (թվով՝ 54 մասնակից): | Սահմանափակ առաջընթաց |
| **13. Պետական ծառայության նշանակումները արժանիքների վրա հիմնում, էթիկայի և բարեխղճության սկզբունքներով մարդկանց առաջխաղացում** | Քաղաքացիական ծառայության խորհուրդը ստեղծել է աշխատանքային խումբ: | Սահմանափակ առաջընթաց |
| **14. Վերլուծել Հանրային ծառայության մասին օրենքը**<br>**Հանրային ծառայողների շահերի բախման և հայտարարագրումների գործընթացների հստակ իրավական դրույթների մշակում** | Ուսումնասիրություններ են անցկացվել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի և ԱՆ կողմից: | Սահմանափակ առաջընթաց |
| **15. Ազդարարների պաշտպանության համալիր օրենսդրության և պրակտիկ մեխանիզմների ներդրում** | | Առաջընթացի բացակայություն |
| **16. Հանրային ծառայողների համար էթիկայի և կոռուպցիայի դեմ պայքարի գծով դասընթացների անցկացում** | 2015թ. ընթացքում անցկացվել է 4 դասընթաց Քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից: | Սահմանափակ առաջընթաց |
| **17. 1.Օրենսդրության ազդեցության գնահատում**<br>**2. Էլ. կառավարման գործիքների ներդրման շարունակականություն**<br>**3.Բաց կառավարման գործընկերության հարթակի արդյունավետության բարձրացում**<br>**4.Տեսչական բարեփոխումների վերջնականացում**<br>**5.Ավարտել հարկային և մաքսային բարեփոխումները** | Մշակվել են պետական վերահսկողության մասին նոր օրինագիծ և կառավարության նոր որոշումների նախագծեր, գնահատվել են 200 իրավական ակտեր: Բացի այդ, 2015թ. հոկտեմբերի 3-ին ուժի մեջ է մտել | Առաջընթաց |

| | | |
|---|---|---|
| | կառավարության նոր որոշումը, որով ստեղծվել է Շուկայի վերսահսկողության տեսչությունը:: | |
| **18. Բարեփոխումների շարք՝ միտված ՎՊ գործունեությանը և ներքին աուդիտորների համակարգին** | Համաձայն ՀՀ ԱՆ-ի՝ ներդրվել է ներքին աուդիտորների որակավորման գնահատման նոր համակարգ: Ինչ վերաբերում է հանձնարարականի 4-րդ մասին, ապա 2015թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում ՎՊ վերապատրաստված աուդիտորները անց են կացրել պիլոտային աուդիտ Բնապահպանության նախարարությունում: Բացի այդ, 2015թ. նոյեմբերին 2-ին աշխատանքային հանդիպում է անցկացվել ՎՊ և ներքին աուդիտորների համար՝ Գերմանական տնտեսական համագործակցության կազմակերպության աջակցությամբ: | Սահմանափակ առաջընթաց |
| **19. Պետական գնումների ոլորտի բարեփոխումներ** | | Առաջընթացի բացակայություն |
| **20. Տեղեկատվության ազատության ոլորտի բարեփոխումներ** | 2015թ. հոկտեմբերին ընդունվել է կառավարության 1204-Ն որոշումը, որով սահմանվել է տեղեկությունների գրանցման, դասակարգման, պահպանման և տրամադրման կարգը: | Սահմանափակ առաջընթաց |
| **21. Կուսակցությունների ոլորտի և ընտրական օրենսդրության բարեփոխումներ Քաղաքական պաշտոնյաների շրջանում շահերի բախման և էթիկայի կանոնների արդյունավետ կիրառում** | | Առաջընթացի բացակայություն |
| **22. Դատական համակարգի բարեփոխումներ** | Նոր Սահմանադրության ընդունումը, որը նախատեսում է ավելի ներկայացուցչական և ինքնակառավարվող բարձրագույն մարմին դատական համակարգի համար: | Սահմանափակ առաջընթաց |
| **23. Կոռուպցիայի դեմ պայքարում բիզնեսի ավելի արդյունավետ դերակատարման միջոցառումներ** | | Առաջընթացի բացակայություն |

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների 2015թ. ծրագրի կատարողական

**Ամբողջությամբ իրականացված գործողություններ**

| Միջոցառում | Գործողության | Գնահատման հիմքը | Գնահատման միջոցը |
|---|---|---|---|
| **26. Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների (անձ/ստորաբաժանում) նշանակում և գործառույթների ամրագրում համապատասխան փաստաթղթերում** | 26. Հանրապետական գործադիր մարմիններում նշանակվել են հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուներ (անձ/ստորաբաժանում): Պատասխանատու աշխատողների պաշտոնի անձնագրերում (աշխատանքի նկարագիր) ամրագրվել են հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումից բխող գործառույթներ: | Նշանակումները կատարվել են հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումների տեսքով: Պատասխանատու պաշտոնատար անձանց պաշտոնի անձնագրերում կատարվել են համապատասխան փոփոխություններ, և ամրագրվել են հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումից բխող գործառույթներ: | ՀՀ կառավարությա ն աշխատակազմի ղեկավար-նախարարի պատասխան գրություն |
| **27. Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող պաշտոնատար անձի (առնվազն աշխատակազմի ղեկավարի կամ մարմնի ղեկավարի տեղակալի մակարդակով) նշանակում** | 27. Հանրապետական գործադիր մարմիններում նշանակվել են հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող պաշտոնատար անձինք՝ առնվազն աշխատակազմի ղեկավարի կամ մարմնի ղեկավարի տեղակալի մակարդակով: | Հանրապետական գործադիր բոլոր մարմիններում նշանակվել են հակակոռուպցիոն ծրագրերը համակարգող պաշտոնատար անձինք աշխատակազմի ղեկավարի կամ տեղակալի մակարդակով, որոնց պաշտոնների անձնագրերում կատարվել է համապատասխան փոփոխություններ: | ՀՀ կառավարությա ն աշխատակազմի ղեկավար-նախարարի պատասխան գրություն |
| **38. Որոշակի չափանիշներին համապատասխանող պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների պարտադիր անկախ աուդիտ անցնելու ծրագրի մշակում և իրականացում** | Սահմանվել են չափանիշներ, որոնց համապատասխանող և պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունները պետք է պարտադիր անցնեն անկախ աուդիտ: Մշակվել է անկախ աուդիտ անցնելու ծրագիրը: | Մշակվել է հստակ չափանիշներով ծրագիր: | ՀՀ ֆինանսների նախարարի պատասխան գրություն |
| **43. ՀՀ կառավարության նիստի 2008 թ. նոյեմբերի 20-ի N47 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ նախարարությունների կոլեգիաների/** | Մշակվել են իրավական ակտերի/օրինակելի աշխատակարգի փոփոխությունների առաջարկները: | Փաստաթղթերը մշակվել և տեղադրվել են ՀՀ ԱՆ պաշտոնական կայքում քննարկումների համար: | ՀՀ արդարադատու թյան |

| | | | |
|---|---|---|---|
| **խորհուրդների օրինակելի աշխատակարգում փոփոխությունների և լրացումների կատարում, որոնք՝<br>- կհստակեցնեն և կտարանջատեն կոլեգիաների և խորհուրդների գործառույթները, կճշգրտեն դրանցում մասնակից կողմերի կազմը, իրավունքներն ու պարտականությունները,<br>- կսահմանեն խորհուրդների ձևավորման և գործունեության բաց, թափանցիկ ընթացակարգերը, ՔՀԿ-ների ներկայացուցչականության և մասնագիտական որակավորման չափորոշիչները,<br>- կիրականացվի կառավարության և նախարարությունների պաշտոնական կայքերում էլեկտրոնային հաշվետվողական համակարգի ներդրում՝ հանրային առաջարկները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները, մասնակցային խորհրդատվական մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունը թափանցիկ և հասանելի դարձնելու համար** | Իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց հիման վրա լրամշակված փաթեթըներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը | Հանրային քննարկումներն անց են կացվել, ուսումնասիրվել է միջազգային փորձը և ընդունվել է համապատասխան իրավական ակտը: | փոխնախարար ի պատասխան գրություն<br>ՀՀ ԱՆ կայքում հասանելի նախագիծ<br>http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_4419814058791_002_Naxagic.Xorhurd.pdf |

## Մասամբ իրականացված գործողություններ

| Միջոցառում | Գործողություն | Գնահատման հիմքը | Գնահատման միջոցը |
|---|---|---|---|
| **33. Հանրային ծառայողների վերապատրաստում՝ կոռուպցիայի դեմ պայքարի, օրինավորության/ բարեվարքության (integrity) ձևավորման և տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառման հմտություններ թեմաներով** | Անցկացվել է 10 ուսուցում: | Քաղաքացիական ծառայության Խորհուրդն անց է կացրել 4 ուսուցում, իսկ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն անցկացրել է վերապատրաստումներ, որոնց մասնակցել է 863 համայնքային ծառայող և մարզպետարանների 75 աշխատակից: | ՀՀ քաղաքացիական ծառայության Խորհրդի և ՀՀ տարածքային կառավարման նախարարի պատասխան գրություն |
| **39. Հանրային լսումների, քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի և ձևաչափերի օրենսդրական կարգավորում** | Ուսումնասիրվել է միջազգային փորձը: Ներկայացվել է առաջարկություն հանրային լսումների, քննարկումների | ՀՀ ԱՆ-ն մշակել է լրացումներ ՀՀ կառ. «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 296- | ՀՀ արդարադատության փոխնախարարի |

| | | | |
|---|---|---|---|
| | կազմակերպման և անցկացման կարգի և ծևաչափերի վերաբերյալ: | Ն որոշման մեջ և ներկայացրել է կառավարություն: | պատասխան գրություն |

**Չիրականացված գործողություններ**

| Միջոցառում | Գործողություն | Գնահատման հիմքը | Գնահատման միջոցը |
|---|---|---|---|
| **1. Պետական եկամուտների հավաքագրման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն** | Ուսումնասիրվել են պետական եկամուտների հավաքագրման ոլորտում կոռուպցիոն ռիսկերը: | Պետական եկամուտների կոմիտեի պատասխան գրությունում նշված է, որ անցկացվել են ուսումնասիրություններ և վերհանել են ռիսկեր, սակայն չկա որևէ հրապարակված ուսումնասիրություն կամ առնվազն դրա պատճենը չի կցվել: | Պետական եկամուտների կոմիտեի պատասխան գրություն |
| **2. Քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով՝ ոստիկանության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն** | Ուսումնասիրվել են ոստիկանության ոլորտի կոռուպցիոն ռիսկերը: | Ոստիկանության կողմից ուղարկված պատասխանում բացակայում է հստակ նշում կատարված ուսումնասիրությանվերաբերյալ: | Ոստիկանության պատասխան գրություն |
| **3. Կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն** | Ուսումնասիրվել են կրթության ոլորտի կոռուպցիոն ռիսկերը: | Կրթության և գիտության նախարարության պատասխանում առկա չէ ոչինչ, որը ցույց կտար ինքնուրույն անցկացրած կամ նվազագույնը սեփական նախաձեռնությամբ պատվիրված ուսումնասիրության մասին. Նշվել է միայն, որ իրենք վերցրել են ՀԿ-ների անցկացրած ուսումնասիրության տվյալները: | Կրթության և գիտության նախարարության պատասխան գրություն |
| **4. Առողջապահության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն** | Ուսումնասիրվել են առողջապահության ոլորտի կոռուպցիոն ռիսկերը: | Առողջապահության նախարարության կողմից տրամադրված գրության մեջ 2015թ. համար ոչինչ նշված չէ: | ՀՀ առողջապահության նախարարության պատասխան գրություն |
| **6.ԵՄ և ՏՀԶԿ հանրային ծառայողների կամ պաշտոնատար անձանց համար կիրառվող էթիկայի կանոնների հիմնարար սկզբունքներին համապատասխան «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, անհրաժեշտության դեպքում՝** | Ուսումնասիրվել է միջազգային փորձը: | Միջազգային փորձի ուսումնասիրության կապակցությամբ առկա չէ հրապարակված հետազոտություն կամ այն չի կցվել պատասխան գրությանը: | ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի, ՀՀ քաղաքացիական |

| | | | |
|---|---|---|---|
| **ճյուղային օրենքներով, էթիկայի սկզբունքների և վարքագծի կանոնների սահմանում** | | | ծառայության խորհրդի և ՀՀ արդարադատության փոխնախարարի պատասխան գրություններ |
| **8. Հանրային ծառայության ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով պատասխանատուներ) գործունեության համակարգման մարմնի նշանակում: Տվյալ մարմնի կողմից վերջիններիս մեթոդական ուղեցույցների տրամադրում և դրանց վերապատրաստման իրականացում** | Ուսումնասիրվել է միջազգային փորձը: | Միջազգային փորձի ուսումնասիրության կապակցությամբ առկա չէ հրապարակված հետազոտություն կամ այն չի կցվել պատասխան գրությանը: | ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի և ՀՀ արդարադատության փոխնախարարի պատասխան գրություններ |
| **9. Յուրաքանչյուր պետական մարմնում հանրային ծառայության ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով պատասխանատուներ), անձնակազմի կառավարման ստորաբաժանումների և հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման համար պատասխանատուների միջև համագործակցության գործուն մեխանիզմների ներդնում** | Ուսումնասիրվել է միջազգային փորձը: | Միջազգային փորձի ուսումնասիրության կապակցությամբ առկա չէ հրապարակված հետազոտություն կամ այն չի կցվել պատասխան գրությանը: | ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի և ՀՀ արդարադատության փոխնախարարի պատասխան գրություններ |
| **36. Մրցութային կարգով թափուր պաշտոնների համալրման մեխանիզմների ներդնում այն** | Իրականացվել են ուսումնասիրություններ: | Միջազգային փորձի ուսումնասիրության կապակցությամբ | ՀՀ քաղաքացիական ծառայության |

| | | | |
|---|---|---|---|
| **պետական մարմիններում, որոնց թափուր պաշտոններն առանց մրցութային կարգի են համալրվում, և թափուր պաշտոնների լրացման գործընթացը համակարգող և մոնիթորինգ իրականացնող իրավասու մարմնի նշանակում** | | առկա չէ հրապարակված հետազոտություն կամ այն չի կցվել պատասխան գրությանը: | խորհրդի և ՀՀ արդարադատության փոխնախարարի պատասխան գրություններ |
| **45. Հայաստանի 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերի ստեղծում, թարմացում, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակում, ավագանու նիստերի, հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ծանուցում և ավագանու նիստերի առցանց հեռարձակում** | Իրականացվել է տեխնիկասարքավորումների և կայքերի պատրաստման ծառայությունների գնման գործընթաց: | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարության պատասխան գրությունում ոչինչ նշված չի բուն գործողության իրականացման վերաբերյալ: | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պատասխան գրություն |

## ՀԱՎԵԼՎԱԾ 4. Կոռուպցիոն հանցագործությունների հետապնդում և դատապարտում. վիճակագրություն

**Գծապատկեր 5. Հարուցված կոռուպցիոն գործերի դինամիկան բոլոր քրեական գործերի նկատմամբ**




| | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը՝ հարուցված քրեական գործեր, որից՝ | 9271 | 14339 | 15092 | 16177 | 15776 | 18333 | 17546 | 17043 |
| - կոռուպցիոն գործեր | 390 | 370 | 385 | 395 | 310 | 502 | 515 | 568 |
| - այլ քրեական գործեր | 8881 | 13969 | 14707 | 15782 | 15466 | 17831 | 17031 | 16475 |
| Կոռուպցիոն գործերի բաժինը ամբողջի մեջ (%) | 4.21 | 2.58 | 2.49 | 2.38 | 1.96 | 2.74 | 2.93 | 3.33 |

**Գծապատկեր 6. Կոռուպցիոն գործերով նախապատրաստված նյութերի քննության արդյունքներ**



| | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը՝ նախապատրաստված և ավարտված նյութեր, որից՝ | 524 | 771 | 896 | 913 | 830 | 1698 | 1239 | 1330 |
| - հարուցված կոռուպցիոն քրեական գործեր | 390 | 370 | 385 | 395 | 310 | 502 | 515 | 568 |
| - կոռուպցիոն քրեական գործերի հարուցման մերժման դեպքեր | 108 | 348 | 402 | 402 | 418 | 1106 | 695 | 714 |
| - ըստ ենթակայության ուղարկված գործեր | 26 | 53 | 109 | 116 | 102 | 90 | 29 | 48 |

**Գծապատկեր 7. Հարուցված կոռուպցիոն գործերով քննության արդյունքներ**




| | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կարճված գործեր | 42 | 155 | 158 | 143 | 132 | 225 | 361 | 462 |
| Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործեր | 188 | 186 | 178 | 136 | 149 | 123 | 118 | 119 |
| Դատարան ուղարկված գործերով մարդկանց քանակ | 222 | 250 | 257 | 205 | 246 | 188 | 197 | 213 |

**Գծապատկեր 8. Կոռուպցիոն գործերի դատական քննության արդյունքներ**



| | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Քննված գործեր** | 155 | 183 | 150 | 129 | 125 | 128 | 89 | 86 |
| **Դատապարտված գործեր** | 153 | 161 | 144 | 109 | 118 | 109 | 73 | 77 |
| **Ամբաստանյալներ** | 182 | 240 | 193 | 189 | 187 | 206 | 120 | 152 |
| **Դատապարտյալներ** | 178 | 208 | 182 | 158 | 180 | 176 | 96 | 140 |
| **Դատապարտված պաշտոնատար անձինք** | 130 | 102 | 103 | 68 | 68 | 65 | 57 | 89 |

**Գծապատկեր 9. Հարուցված քրեական գործերի դինամիկան՝ ըստ կոռուպցիոն հանցատեսակների** *(պատկերված են առավելագույն թիվ կազմող 6 հանցատեսակները)*




| **Կոռուպցիոն հանցատեսակներ** | | **2008** | **2009** | **2010** | **2011** | **2012** | **2013** | **2014** | **2015** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հ.178, մ.2, կ.1** | Խարդախությունը, որ կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով[32] | | | | | 6 | 8 | 2 | |
| **Հ.178, մ.2, կ.5** | Խարդախությունը, որ կատարվել է կաշառք ստանալու նպատակով[33] | | | | | 8 | 1 | 2 | |
| **Հ.179, մ.2, կ.1** | Յուրացնելը կամ վատնելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով | 31 | 49 | 44 | 40 | 37 | 51 | 33 | 27 |
| **Հ.179, մ.3** | Յուրացնելը կամ վատնելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով կամ կազմակերպված խմբի կողմից | 9 | 16 | 21 | 26 | 23 | 20 | 20 | 13 |

[32] 2008-2012թթ. հանցագործությունների ցանկում տվյալ հանցատեսակը բացակայում է:
[33] 2008-2012թթ. հանցագործությունների ցանկում տվյալ հանցատեսակը բացակայում է:

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հ.187** | Օրինական և ձեռնարկատիրաՁան և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը | | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **Հ.190, մ.3, կ.3** | Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (փողերի լվացում) | 3 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **Հ.200** | Առևտրային կաշառքը | 6 | 5 | 3 | 7 | 8 | 7 | 11 | 6 |
| **Հ.205** | Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը | 181 | 109 | 126 | 121 | 86 | 145 | 86 | 100 |
| **Հ.214** | Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը | 14 | 37 | 50 | 34 | 28 | 28 | 31 | 33 |
| **Հ.215, մ.3, կ.1** | Մաքսանենգությունը | 5 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2 | 0 |
| **Հ.308** | Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը | 56 | 62 | 59 | 43 | 36 | 57 | 88 | 113 |
| **Հ.309** | Պաշտոնեական լիազորություններն անցնելը | 4 | 5 | 9 | 4 | 6 | 22 | 83 | 115 |
| **Հ.311** | Կաշառք ստանալը | 35 | 17 | 17 | 33 | 18 | 23 | 44 | 32 |
| **Հ.311.**[1] | Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը | 6 | 10 | 12 | 12 | 7 | 5 | 7 | 1 |
| **Հ.312** | Կաշառք տալը | 4 | 6 | 1 | 2 | 5 | 1 | 3 | 8 |
| **Հ.312.**[1] | Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 |
| **Հ.313** | Կաշառքի միջնորդությունը | 1 | 1 | 1 | 0 | 3 | 0 | 1 | 0 |
| **Հ.314** | Պաշտոնեական կեղծիքը | 23 | 37 | 16 | 18 | 13 | 26 | 42 | 71 |
| **Հ.315.**[2] | Պետական կամ համայնքային սեփակա-նություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաև շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, | 5 | 8 | 5 | 3 | 5 | 3 | 12 | 2 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելը | | | | | | | | |
| Հ.332, մ.3 | Արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 |
| Հ.336 | Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2 | 0 |
| Հ.349, մ.2, մ.3 | Ապացույցներ կեղծելը | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 3 |
| Հ.353 | Դատական ակտը դիտավորությամբ չկատարելը | 4 | 0 | 1 | 0 | 0 | 3 | 4 | 12 |
| Հ.375 | Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը | 3 | 5 | 12 | 45 | 33 | 12 | 10 | 22 |

**Գծապատկեր 10. Դատարանում քննված գործեր՝ ըստ կոռուպցիոն հանցատեսակների** *(պատկերված են առավելագույն թիվ կազմող 6 հանցատեսակները)*




| ՔՕ հոդված | Կոռուպցիոն հանցատեսակներ | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ.178, մ.2, կ.1 | Խարդախությունը, որ կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով[34] | | | | | | 1 | 8 | 1 |
| Հ.178, մ.2, կ.5 | Խարդախությունը, որ կատարվել է կաշառք ստանալու նպատակով[35] | | | | | | 4 | 2 | 2 |
| Հ.179, մ.2, կ.1 | Յուրացնելը կամ վատնելը, որը կատարվել | 13 | 31 | 34 | 24 | 8 | 26 | 18 | 16 |

[34] 2008-2012թթ. հանցագործությունների ցանկում տվյալ հանցատեսակը բացակայում է:
[35] 2008-2012թթ. հանցագործությունների ցանկում տվյալ հանցատեսակը բացակայում է:

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | է պաշտոնեական դիրքն օգտագործելով | | | | | | | | |
| **Հ.179, մ.3** | Յուրացնելը կամ վատնելը՝ պաշտոնեա-կան դիրքն օգտագործելով, որը կատար-վել է առանձնապես խոր չափերով կամ կազմակերպված խմբի կողմից | 1 | 3 | 11 | 7 | 12 | 10 | 3 | 3 |
| **Հ.184, մ.2, կ.3** | Գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| **Հ.200** | Առևտրային կաշառքը | 4 | 3 | 4 | 3 | 4 | 2 | 2 | 3 |
| **Հ.205** | Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը | 84 | 66 | 38 | 26 | 24 | 19 | 15 | 5 |
| **Հ.214** | Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը | 4 | 7 | 6 | 7 | 15 | 8 | 3 | 1 |
| **Հ.308** | Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը | 18 | 23 | 17 | 16 | 14 | 14 | 10 | 13 |
| **Հ.309** | Պաշտոնեական լիազորություններն անցնելը | 6 | 7 | 3 | 1 | 3 | 4 | 1 | 1 |
| **Հ.311** | Կաշառք ստանալը | 14 | 20 | 14 | 14 | 10 | 7 | 8 | 13 |
| **Հ.311.[1]** | Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը | 0 | 7 | 7 | 7 | 4 | 5 | 2 | 1 |
| **Հ.311.[2]** | Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելը | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| **Հ.312** | Կաշառք տալը | 1 | 7 | 1 | 2 | 2 | 4 | 1 | 3 |
| **Հ.312.[1]** | Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը | 0 | 0 | 0 | ? | 0 | 0 | 0 | 1 |
| **Հ.313** | Կաշառքի միջնորդությունը | 0 | ? | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հ.314** | Պաշտոնեական կեղծիքը | 8 | 5 | 5 | 5 | 1 | 7 | 4 | 10 |
| **Հ.315.[2]** | Պետական կամ համայնքային սեփակա-նություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաև շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելը | 0 | 1 | 2 | 1 | 3 | 2 | 0 | 0 |
| **Հ.341** | Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն հարկադրելը | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| **Հ.349, մ.2, մ.3** | Ապացույցներ կեղծելը | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 1 |
| **Հ.353** | Դատական ակտը դիտավորությամբ չկատարելը | 0 | 0 | 0 | 0 | 0 | 4 | 1 | 0 |
| **Հ.375** | Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը | 2 | 3 | 3 | 7 | 7 | 4 | 6 | 8 |